նից մի գմբէթաձև փառաւոր կոփածոյ քարամբք եկեղեցի. այս ազգասիրի ջերմեռանդութեան ցոյցը տեսնելով փոխանորդ արժանապատիւ Հայր Աբրահամէս վարդապետը, նորա ազգասիրական գործը և Աստուածահաճոյ ձեռնարկը օրհնելէն զկնի, յորդորեց, որպէս զի կատարելագործէ, իւր բարեգործութիւնը, յաւելով 'ի վերայ՝ և մի վարժարան նոյն իսկ եկեղեցւոյ պարապի մէջ Ուտիախօս մանկտեաց դասատարակութեան համար։ Արժանապատիւ Հօր այսօրինակ խրախուսանք՝ նորա ազգասիրական հոգւոյ վերայ այնչափ մեծ ազդեցութիւն ունեցաւ, մինչև իրրև սրբազան պարտք իւր Աստուածսիրութեան, յանձն առաւ կատուցանել. Հայրն էլ՝ 'ի լրումն ջերմեռանդութեան նորա, հաճոյ տոյ ուսուցիչ, յորդոր լինել ժողովրդոց, և հոգալ դպրոցի յարատեւութեանը։

Ի քաջալերութիւն բարեպաշտ ազգասիրին՝ և 'ի յորդոր այլոց, կ'աղերսեմ Արարատից, իւր ամենազրի էջերում տեղ տոյ այս գեղեցիկ գործը համբաւել 'ի լուր Ազգի, որ բաւական ուրախութիւն ունի պատմաւել շատ ազգասէր սրտից, եթէ, տեսնեն՝ յետ այնքան ճախող և անցաւոր միջոցաց՝ մի սիրելի ազգայնի, այսքան յիշատակի գործ գործած, և բարեմաղթել 'ի Տեառնէ՝ նորա ազգասէր կենաց թելը յերկարել, որ Աստուածային քաղցր ակնարկութեան և խնամոյ արժանի է, արդարև իւր բոլոր սիրելիքովք։ Երբ Արարատ ամենազրոյդ էջերը շնորհ կ'ունենայ փութով հրատարակել մեր այս նամակը, խոստանում եմ 'Նուխւոյ դրութիւնը, և ժողովրդոց ներկայ և անցեալ հանգամանքը կենսագրել (*) 'ի դի-ութիւն մեր սիրելի մերձաւոր և հեռաւոր ազգայնոց, որ 'ի վաղուց անծանօթ լինելով՝ շատ հետաքրքրութեան արժանի է։

Յ. Մելքոնեան

ի 12 յուլիսի 1869 ամի
ի քաղաքն Նուխի։

Խմբագրութեան «Արարատ» ամենազրոյ.

Համաձայն կարգադրութեան Հոգաբարձական ժողովոյ Աստրախանայ Հայոց Ծխական Հոգևոր Դպրոցաց, կայացելոյ 'ի 21 յունիսի անցելոյ, սկիզբն արարեալ տարեկան հարցաքննութեան աշակերտաց 'ի մէկէն յուլիսի, աւարտեաց 'ի 15 նոյն ամսոյ, յիւրաքանչիւրում աւուր պարապելով հարցաքննութեամբ միոյ առարկայի. և 'ի մէջ հարցաքննութեան ջանասէր և յառաջադէմ հանդիսացեալ աշակերաք՝ փարձասրեցան գրենաք 'ի քաջալերութիւն առ յապայն. զորմէ Հոգաբարձութիւն Ծխական Դպրոցաց Աստրախանայ խնայարհարար խնդրէ՝ միջոցաւ Արարատ լրագրոյ հաղորդել 'ի տեղեկութիւն ամենից բարենախանձ անդամոց ազգի Հայոց։

Հոգաբարձուք, Աւագ քահ. Յովսէփ Բունիաթեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սիմէօն Պօղոսեանց
Սարգիս Բուրջալեանց

Ք. 108

ի 23 Յուլիսի 1869 ամի.
Աստրախան։

. . . . Խմբագրութեան «Արարատ» ամենազրոյ.

Փառք Աստուծոյ, որ անօրինէ զամենայն յամենայնի, և սրտիւ Վ. Հեղափառ Կաթուաշխատասիրէին հաղորդել մեզ, զոր ամենայն սիրով կը փութամք ի լոյս ընծայել միջոցաւ Արարատ ամենազրոյ։ Իսկ ցանկացողաց համար այնպիսի գրութիւնքը առանձին գրքեր եւս կը կազմեմք։

(*) Եցի՛ Թէ ամեն կողմ եւ զուտ մանատանդ ի Հայաստան. իւրաքանչիւր գիտնական ազգասէրը, իւրեանց գտնուած տեղեաց եւ երկրից տեղագրութիւնքը, ժողովրդական կենաց եւ այն պարագայից վրայ մանրամասն եւ ուսումնական տեղեկութեամբ

զեկոսի ամենայն Հայոց Տեառն Գէորգայ, որ հոգայ և գործէ զօգուտն Աղգի և Եկեղեցւոյ. որոյ շնորհիւն և մեք բարեբաղդութեան կենաց վիճակի կ՚արժանանամք բարոյականապէս. ըստ որում և մեր գիւղն Ս. Մեսրովբեան Ուսումնարանը յօրէ շնորհաբեր այցելութեան Նորին Վեհափառութեան յամենանն մայիսի անցեալ 1868 ամի, ոչ սակաւ յառաջադիմութեան ասպարէզ բացեց, որպէս և ահա այս տարւոյ հարցաքննութիւնն բացայայտ կերևի. որն խընդրեմ տպագրութեամբ յԱրարատ պատուական ամսագրի մէջ հաղորդել սիրելի Աղգայնոց 'ի տեղեկութիւն։

Սուրբ Մեսրովբայ Թարգմանչի Հայոց Օշականայ Ուսումնարանի տարեկան հարցաքննութիւնը.

Օշա՚կանայ սուրբ Մեսրովբեան ուսումնարանի 7-րդ տարւոյ հարցաքննութիւնն սկսաւ ամսոյս 17, և 20ին վերջացաւ, որն հիմնարկուած է 1860 թուին, հրամանաւ Սիսոյի Սուրբ Էջմիածնի, հոգացողութեամբ յայնժամեան գործակալի Էջմիածնայ գաւառս և այժմեան փոխ—թեմակալին Երևանայ գերապատիւ Մեսրովբ վարդապետի Սմբատեանց, որպէս 1863 թուին հրատարակեցաւ "Ամբաւարեր Ուսիոյ" հայկական լրագրոյ միջոցաւ "Աստուածպաշտութիւն Օշական գեղջ և Եկեղեցւոյ և Ուսումնարանի Նորին" անուանեալ յօդուածովն յիշեալ վարդապետի։

Յիշեալ հարցաքննութեան նախագահն էր նոյն իսկ Երևանայ վիճակի փոխ-թեմական գերապատիւ Մեսրովբ վարդապետն. որ յատկապէս ուսումնարանիս նեղքին և արտաքին կառավարութեանն հոսու լինելոյ պատճառաւ եկած էր յՕշական, որին հանդիսակից էին նաև Օշականայ բարեկրօն քահանայքն և մեծարու իշխանքն, և յարգելի Հոգաբարձուքն Պ. Մկրտիչն 8ի Մեսրովբեան Մօրիկեանց, և Աբիսողոմն Բաղդասարեան։

Հարցաքննութենէն կ՚երևէր որ աշակերտք բաւականին վարժ էին Քերականութեան կանոնների և ուրիշ առարկայից մէջ, և ոչ սակաւ յառաջադիմ Աբօնագիտութեան մէջ։

Այս մասին կ՚յուսամք, որ Օշականայ սուրբ Մեսրովբեան ուսումնարանը մեր սիրելի Աղգայնոց պարծանաց առիթ լինի, և լուսաւորութեան պատճառ, որպէս Օշական գեղջ մատաղերամ մանկտեաց, նոյնպէս և շրջակայ գիւղջոյ։

Այժմ ուսումնարանիս մէջ երեսուն չափ աշակերտք ուսանին առ այժմ միայն. Հայերէն գրականութիւն, այն է՝ Քերականութիւն, Աղգային պատմութիւն և վայելչագրութիւն. իսկ Ռուսաց լեզուի հասարակ ընթերցանութիւն և վայելչագրութիւն, որոց վարժապետն ստորագրութեանս գրողն է, նա և Աբօնագիտութիւն և Երգեցողութիւն եկեղեցական, որոց վարժապետն է բարեկրօն Դասայի խաչակիր քահանայն Գ. աղաբեան. և մեծայոյս եմք թէ՝ շնորհիւ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Գէորգայ, որ յամենայն ժամ բարեկարգ տնօրէնութեամբն և սրաշտելի կոնդակօքն հոգայ ուսումնարանաց շինութեան և հաստատութեան պատրաստութիւնքն, ունի և մեր Սուրբ Թարգմանչի անուան և յիշատակի փառաւորութեան համար պատրաստուած ուսումնարանն յառաջադիմութիւն ստանալ և մատաղ զարգացման պատճառ լինել մանկտեաց գեղջս, որովք և Ս. Թարգմանչի անուամբ կառուցեալ Եկեղեցին կ՚պայծառանայ և մեր ժողովուրդը կը վերիթարուի։

Գէորգ Ս. Յ. Մօրիկեանց

30 յուլիսի, 1869 ամի.
Յ Օ շ ա կ ա ն։